ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1957 Общественные науки

Ս. Խրիմլյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Արդյունաբերական ձեռնարկությունների և շինարարության կառավարման ղեկավարումը բարելավելու վերաբերյալ ընկեր Խրուշչովի զեկուցման թեզիսների համաժողովրդական քննարկումը և այդ հարցի առթիվ ՍՍՌՄ Գերագույն Սովետի 7-րդ սեսիայի ընդունած օրենքը նոր էտապ են նշանավորում Սովետական Միության զարգացման մեջ, տնտեսական շինարարության բնագավառում դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքների իրականացման գործում, ավելի մեծ հնարավորություններ ստեղծելով երկրի արտադրողական ուժերի զարգացման համար։

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս երկրի տնտեսական ճիշտ շրջանացմանը։ Շրջանացումն առաջին անգամ անցկացվեց ԳՕԷԼՌՈ-ի պլանում։ Սկզբնական շրջանում առանձնացվեցին 8 շրջաններ՝ Կենտրոնական արդյունաբերական, Հյուսիսային, Վոլգայի, Հարավային, Կովկասյան, Ուրալյան, Արևմտա-Սիբիրյան և Թուրքեստանյան շրջաններ։ Տնտեսական շրջանացման հարցերը լուծելու համար հետագայում հատուկ հանձնաժողովներ ստեղծվեցին, որոնցից մեկը Համառուս. ԿԳԿ-ին կից՝ Մ. Ի. Կալինինի նախագահությամբ, մյուսը Պետպլանին կից՝ ակադեմիկոս Ի. Գ. Ալեքսանդրովի ղեկավարությամբ։ Այդ հանձնաժողովները որոշեցին տնտեսական շրջանացման մեթոդոլոգիական հիմունքները, որոշեցին երկրում տնտեսության ռացիոնալ տերիտորիալ կազմակեպություն ստեղծելու ուղիները՝ ելնելով հասարակական աշխատանքի արտադրողականության աճման շահերից։

Սովետական շինարարության հետագա զարգացման ընթացքում վարչա-տնտեսական կառավարման կարիքները հանգեցրին վարչա-տերիտորիալ միավորների ապախոշորացմանը։ Այդ կապակցությամբ տնտեսական շրջանների մեջ միավորվեցին մի խումբ մարզեր և երկրամասեր։ ԳՕԷԼՌՈ-ից հետո Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր պլանը, որը կազմվել է Հայրենական պատերազմից առաջ, 1943—1957 թթ. ժամանակաշրջանի համար, նախատեսում էր ՍՍՌՄ 9 խոշորացված տնտեսական շրջանների կոմպլեքսային զարգացում։

Այդ ցանցում միութենական ռեսպուբլիկաները խմբավորվեցին 4 շրջանում՝ Արևմուտք, Հարավ, Անդրկովկաս, Միջին Ասիա և Ղազախստան։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում ընդունվեց 13 տնտեսական շրջան ընդգրկող նոր ցանց, որը գործում էր մինչև վերջին ժամանակներս։

Միութենական ռեսպուբլիկաների խմբավորումը այդ ցանցում պահպանված է, ՌՍՖՍՌ բաժանումը տնտեսական շրջանների որոշ չափով ապախոշորացված է։ Այդ շրջանները հետևյալներն են՝ 1) Կենտրոն, 2) Հյուսիս-արևմուտք, 3) Հյուսիս, 4) Պովոլժիե, 5) Ուրալ, 6) Հյուսիսային Կովկաս, 7) Արև-

մուտք, 8) Հարավ, 9) Անդրկովկաս, 10) Ղազախստան և Միջին Ասիա, 11) Արևմըտյան Սիբիր, 12) Արևելյան Սիբիր, 13) Հեռավոր Արևելք։

Տնտեսական հիմնական շրջանների այս ցանցը, չնայած նրա որոշ թերությունների, առանձնապես միութենական ռեսպուբլիկաների ռայոնացման և առանձին տերիտորիալ կոմպլեքսների զարդացման հեռանկարների հաշվառման բնագավառում, այնուամենայնիվ զդալի դրական դեր խաղաց արտադրության տերիտորիալ տեսակետից պլանավորման գործում։ Հասկանալի է, որ ներկայումս այդ ցանցը չի համապատասխանում առանձին տերիտորիաների արտադրողական ուժերի ստեղծված կոմպլեքսներին և պահանջում է վերանայում՝ հաշվի առնելով դրանց զարդացման հնարավոր հեռանկարները։

Այժմ, արդյունաբերության և շինարարության կառավարման կազմակերպման հետագա կատարելագործման վերաբերյալ օրենքի կապակցությամբ, ստեղծվում են ժողովրդական տնտեսության խորհուրդներ՝ գոյություն ունեցող վարչական բաժանմանը համապատասխան։ Երևան եկավ «տնտեսական վարչական շրջանի» նոր հասկացությունը, որն իր բովանդակությամբ տարբերվում է «հիմնական տնտեսական շրջանի» հասկացությունից։ Հարց է ծագում՝ արդյոք այդ կապակցությամբ հիմնական տնտեսական շրջանը չի կորցնում իր նշանակությունը, որպես որոշակի տերիտորիայի տնտեսական կոմպլեքս, որը տնտեսական մի ամբողջություն է ներկայացնում այն դերի շնորհիվ, որ նա այժմ խաղում է աշխատանքի համամիութենական բաժանման մեջ և խաղալու է զլխավոր պլանի հեռանկարների տեսակետից, որի կազմումն արդեն հերթի է դրված։

Տնտեսական վարչական շրջանը, ինչպես ցույց է տալիս հենց այդ անունը, ոչ միայն տնտեսական, այլև իրավական կատեգորիա է, քանի որ որպես տնտեսական շրջան առանձնացվում է վարչականորեն ձևավորված տերիտորիալ միավորը։ Արդյունաբերության և շինարարության կառավարումը, հասկանալի է, պետք է տարվի ըստ վարչականորեն ձևավորված միավորների, որոնց տերիտորիան տնտեսական տեսակետից ևս որոշ չափով կոմպլեքսային ամբողջություն է։ Հիմնական տնտեսական շրջանը, որպես կանոն, վարչականորեն ձևավորված միավոր չէ, դա զուտ տնտեսական կատեգորիա է, որը պլանավորող կենտրոնական օրգաններն ընդունել են բարձր կարգի տերիտորիալ կոմպլեքսների նկատմամբ՝ համեմատաբար խոշոր տերիտորիալ միավորների մասնագիտացման ու կոմպլեքսային զարդացման հարցերն առավել ճիշտ լուծելու նպատակով։

Առանձին մարզերում, երկրամասերում ու միութենական ռեսպուբլիկաներում ժողովրդական տնտեսության խորհուրդների ստեղծումը, ճիշտ զուգակցելով կենտրոնացված զեկավարությունը տեղերի լայն նախաձեռնության հետ, պայմաններ է ստեղծում ոչ միայն արդյունաբերության ու շինարարության օպերատիվ զեկավարումն արմատապես բարելավելու, այլև արտադրողական ուժերն ավելի ճիշտ տեղաբաշխելու, տնտեսության նպատակահարմար մասնագիտացումն ու կոմպլեքսային զարդացումը և արդյունաբերական ձեռնարկությունների կոոպերացումն ապահովելու համար։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ կոմպլեքսայնության պատրվակով յուրաքանչյուր երկրամասում, մարզում և խոշոր քաղաքներում արդյունաբերության զրեթե բոլոր ճյուղերը զարգացնելու երբեմն նկատվող տենդենցները արդյունաբերության և շինարարության տերիտորիալ կառավարման սիստեմին անցնելու կապակցությամբ

կարող են ուժեղանալ, ստեղծելով տնտեսական վարչական առանձին շրջաններում ավտարկիայի ձգտելու վտանգ։ Իսկապես, տնտեսական կոմպլեքս ներկայացնող առանձին խոշոր տերիտորիաների զարգացման հեռանկարների հարցերը ճիշտ լուծելու համար նպատակահարմար է մի շարք տնտեսական վարչական շրջաններ միավորել երկրի հիմնական տնտեսական շրջաններում, որովհետև դա թույլ կտա ավելի ճիշտ մոտենալու բուն տնտեսական վարչական շրջանի զարգացման հեռանկարների հարցերի լուծմանը, քան եթե այդ շրջանը վերցնենք առանձին, կտրված այն տնտեսական կոմպլեքսից, որտեղ նա փաստորեն մտնում է ըստ իր մասնագիտացման և կոմպլեքսայնության աստիճանի։

Պրակտիկան ցույց է տալիս, որ ձեռնարկությունների կոոպերացման, նրանց նյութական-տեխնիկական մատակարարման, պատրաստի արտադրանքի բաշխման հետ կապված շատ հարցեր չեն կարող պարփակվել տնտեսական վարչական շրջանների սահմաններում և պետք է լուծվեն ամենից առաջ տերիտորիայով ու տնտեսության ծավալով ավելի խոշոր հիմնական տնտեսական շրջանների շրջանակներում, իսկ որոշ դեպքերում էլ ամբողջ երկրի մասշտաբով։

Մասնագիտացված ժամանակակից խոշոր ձեռնարկությունները, օրինակ՝ ավտոգործարանները, այնքան ընդարձակ տնտեսական կապեր ունեն, որ նրանց կոոպերացումը տնտեսական վարչական շրջանի շրջանակներով սահմանափակելն անհնարին է և բնավ ռացիոնալ չէ։ Զանազան ազրեգատների, հանգույցների, դետալների պատրաստումը նպատակահարմար է կազմակերպել մասնագիտացված և տեխնիկապես կատարյալ ձեռնարկություններում, որոնք թողարկում են հսկայական քանակությամբ հարահոս-մասսայական արտադրանք։ Բնական է, որ այդ արտադրանքն սպառվելու է տնտեսական վարչական մի շարք շրջաններում։ Տնտեսապես աննպատակահարմար կլիներ այս վերջիններում ստեղծել միայն նրանցից յուրաքանչյուրի կարիքները հաշվի առնող փոքր ձեռնարկություններ։

Երկրի բաժանումը հիմնական տնտեսական շրջանների պետք է պահպանվի անկախ տնտեսական վարչական նոր շրջանների առկայությունից։ Այդ բաժանումն անհրաժեշտ է ինչպես առանձին խոշոր տերիտորիաների ճիշտ մասնագիտացումն ու զարգացման իսկական կոմպլեքսայնությունը գլխավոր ու հնգամյա պլանների տեսակետից ապահովելու, այնպես էլ տնտեսության ընթացիկ պլանային ղեկավարման համար։

Կասկած չի հարուցում այն, որ 13 հիմնական տնտեսական շրջանների գոյություն ունեցող ցանցը բոլորովին չի կարող բավարարել տնտեսական շրջանացման նոր պահանջները՝ ինչպես փաստորեն ստեղծված ու զարգացող տերիտորիալ կոմպլեքսներին, այնպես էլ այն սկզբունքային հիմունքներին համապատասխանելու իմաստով, որոնց հիման վրա պետք է առանձնացվեն այդ կոմպլեքսները։

Տնտեսական կոմպլեքսներ ներկայացնող հիմնական տնտեսական շրջանները, որպես աշխատանքի համամիութենական տերիտորիալ բաժանման արդյունքներ, ծագել ու զարգացել են ՍՍՌՄ ազգային-քաղաքական կառուցվածքի հետ սերտորեն կապված։ Սոցիալիստական շինարարության տարիներին անչափ աճեց միութենական բոլոր ռեսպուբլիկաների տնտեսությունը։ ՍՍՌՄ միասնական ժողովրդական տնտեսության մեջ ամրապնդվեց նրանց

տնտեսական միասնությունն ու ինքնուրույնությունը։ Միութենական յուրաքանչյուր ռեսպուբլիկա, կազմելով Սովետական Միության բաղկացուցիչ և անբաժանելի մասը, ներկայացնում է իրենից համամիութենական մասշտաբով մասնագիտացված և ամեն մի ռեսպուբլիկայի սահմաններում կոմպլեքսային տնտեսական շրջան ՍՍՌՄ միասնական ժողովրդական տնտեսության սիստեմում։

Սովետական Միության ժողովրդական տերիտորիալ պլանավորման մինչ այժմ գոյություն ունեցող պրակտիկան, երբ մի քանի միութենական ռեսպուբլիկաներ մտցվում էին մեկ հիմնական տնտեսական շրջանի մեջ, այդ տեսակետից հետևողական չէ և փաստորեն չի համապատասխանում այն դերին, որ այժմ միութենական ռեսպուբլիկաները խաղում են ՍՍՌՄ էկոնոմիկայում։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը խոշոր միջոցառումներ են իրականացնում տնտեսական ու կուլտուրական շինարարության ընդլայնման համար։ Առավել ևս կասկած չի հարուցում այն, որ միութենական ռեսպուբլիկաները, առանց որևէ միջանկյալ օղակի, պետք է կազմեն ՍՍՌՄ-ում աշխատանքի տերիտորիալ բաժանման գլխավոր հիմքը։

Մինչդեռ մի շարք տնտեսագետներ, տնտեսական աշխարհագրագետներ, պլանային աշխատողներ, իրենց ելույթներում ու հոդվածներում խոսելով հիմնական տնտեսական շրջանների նոր սխեմայի մասին, առաջարկում են փոքր ուղղումներով պահպանել միութենական ռեսպուբլիկաների խմբավորումը Անդրկովկասյան (Վրաստան, Հայաստան, Ադրբեջան), Միջինասիական (Ուզբեկստան, Թուրքմենիա, Տաջիկստան, Կիրգիզիա) և Մերձբալթյան (Էստոնիա, Լատվիա, Լիտվա) տնտեսական շրջանների կազմում։

Կան առաջարկություններ, որ Ուկրաինական ՍՍՌ միայն Մոլդավական ՍՍՌ հետ պետք է կազմի մի հիմնական տնտեսական շրջան։

Մեկ տնտեսական շրջանի մեջ միավորված ռեսպուբլիկաներից յուրաքանչյուրը լիովին համապատասխանում է հիմնական տնտեսական ինքնուրույն շրջանի հատկանիշներին։ Իսկ այնպիսի միութենական ռեսպուբլիկաներ, ինչպես Ուկրաինան ու Ղազախստանը, կարող են ստորաբաժանվել միութենական նշանակություն ունեցող իրենց ներռեսպուբլիկական տնտեսական շրջանների։ Օրինակ, Ուկրաինայում կարող են առանձնացվել (ինչպես այդ արվում է տնտեսական շրջանների ցանցի մի քանի նոր սխեմաներում) 5 այդպիսի շրջաններ (Դոնեց-Մերձդնեպրյան, Կենտրոնական կամ Կիևի, Հյուսիս-Արևելյան կամ Խարկովի, Մերձսևծովյան կամ Օդեսայի և Արևմտյան կամ Լվովի)։ Նայած, որ ռեսպուբլիկայում ստեղծված են 11 տնտեսական վարչական շրջաններ, իսկ Ղազախստանում՝ 3 շրջան (Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան)։ Մնացած բոլոր միութենական ռեսպուբլիկաները, անկախ իրենց վարչական բաժանումից (մարզերի, օկրուգների, շրջանների), հիմնական տնտեսական շրջանների նոր ցանցում պետք է դիտվեն որպես առանձին տնտեսական շրջաններ՝ ստորաբաժանվելով ռեսպուբլիկական նշանակություն ունեցող իրենց ներքին տնտեսական շրջանների։

Այն հանգամանքը, որ այդ ռեսպուբլիկաներում համաձայն Գերագույն Սովետի համապատասխան որոշման ստեղծվում է մեկ տնտեսական վարչական շրջան, ոչ մի չափով չի խանգարում, որ դրանք միաժամանակ դասվեն երկրի հիմնական տնտեսական շրջանների շարքը։ Այն տեսակետը, որ տարբերություն

չի դնում սովետական տնտեսական վարչական շրջանի և միութենական ռեսպուբլիկայի միջև, հակասում է կոնստիտուցիոն դրույթներին և տնտեսական հիմք չունի։ Միութենական ռեսպուբլիկաները թե՛ իրավական և թե՛ տնտեսական տեսակետից տերիտորիապես ձևավորված բարձր կարգի միավորներ են, սովորական տնտեսական շրջաններից տարբերվելով իրենց վարչական ձևավորվածությամբ, իսկ սովորական տնտեսական վարչական շրջաններից՝ տրնտեսական կատարյալ կոմպլեքսայնությամբ։

Որոշ դեպքերում առանձին տերիտորիաների տնտեսության ուսումնասիրման և պլանավորման նպատակները կարող են պահանջել ռեսպուբլիկաների և տնտեսական մյուս շրջանների այս կամ այն խմբավորումը։ Օրինակ, կարող է անհրաժեշտություն ծագել, որպեսզի որոշ արտադրանքի նկատմամբ եղած պահանջմունքի և դրա բավարարման ծավալը սահմանվի ըստ ամբողջ Անդրկովկասի կամ ըստ Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի։ Այդ նպատակների համար ռեսպուբլիկաների նման խմբավորման նպատակահարմարությունը բնավ չի բացառվում նրանով, որ միութենական ռեսպուբլիկաները առանձնացվում են որպես ՍՍՌՄ հիմնական տնտեսական շրջաններ։

Հիմնական տնտեսական շրջանների գոյություն ունեցող ցանցը ՌՍՖՍՌ-ում պետք է որոշ չափով ապախոշորացվի, մանավանդ Կենտրոնի, Հարավ-Արևելյան շրջանի և Պովոլժիեի վերաբերմամբ, որոնց կազմում ստեղծվել են ըստ էության նոր, լիովին ինքնուրույն տնտեսական շրջաններ։ Ըստ երևույթին, տնտեսական շրջանների ընդհանուր թիվը ՌՍՖՍՌ-ում հին ցանցի 9 շրջանի դիմաց հասնելու է 13 շրջանի։ Այսպիսով, Սովետական Միությունում եղած 13 հիմնական տնտեսական շրջանի փոխարեն նոր ցանցով դրանց թիվը կհասնի մոտ 33-ի։

Մի շարք ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայկական ՍՍՌ-ում, ռեսպուբլիկական նշանակություն ունեցող տնտեսական շրջանների առանձնացումը միանգամայն օրինաչափ է և անհրաժեշտ։ Ծառայելով ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի տեղաբաշխման և նրա տերիտորիալ պլանավորման գործի բարելավմանը, դրանով իսկ այն կնպաստի ամբողջ ՍՍՌՄ-ի արտադրողական ուժերի ընդհանուր վերելքին։

Տնտեսական վարչական շրջան հանդիսացող Հայկական ՍՍՌ-ի դերը, որպես միասնական տնտեսական շրջանի, որը ՍՍՌՄ-ում աշխատանքի տերիտորիալ բաշխման գլխավոր հիմքն է՝ առանց որևէ միջանկյալ օղակների, առանձնապես հստակ է դրսևորվում նրա ներռեսպուբլիկական տնտեսական շրջանները քննության առնելիս։

* * *

Ամեն մի տերիտորիայի տնտեսական շրջանացումը կոմպլեքսային է, այն հիմնվում է տվյալ տերիտորիայի բնական ու տնտեսական յուրահատուկ պայմանների վրա, որոնք իրենց հերթին ներկայացնում են իրար հետ փոխադարձաբար կապված և իրար վրա ներգործող բնապատմական և տնտեսական կոմպլեքսներ։

Ռելեֆը, հիդրոգրաֆիան, արևի ճառագայթումը, մթնոլորտի և խոնավության շրջանառության պրոցեսները — այս բոլոր բնական գործոնները, կան-

խորոշելով բուսական աշխարհի և ցամաքի մակերևույթի վրա հանքային ապարների հողմնահարման փխրուն արդյունքների բնույթն ու զարգացումը, ստեղծում են երկրի կեղևի մակերևույթային շերտը՝ հողը, որտեղ ծնունդ է առնում, զարգանում և մահանում է օրգանական նյութը։ Երկրի մակերևույթային շերտում այս կամ այն ինտենսիվությամբ տեղի է ունենում հողագոյացման պրոցես և առաջանում է հողի էական ու նշանակալի հատկություններից մեկը՝ պտղաբերությունը, բույսերի զարգացման ամբողջ ժամանակամիջոցում նրանց անընդհատ ջրով, մոխրասննդի տարրերով և կապված ազոտով ապահովելու ունակությունը։ Այդ բնական արտադրողական ուժը պոտենցիալ հարստությունների մի անսպառ աղբյուր է։ Հողի պտղաբերության ստեղծման գործում, բնական գործոններից զատ, հսկայական դեր է խաղում մարդկային հասարակությունը, որը, սոցիալական մեկ ֆորմացիայից մյուս, ավելի բարձր ֆորմացիայի անցնելուն զուգընթաց, ավելի ու ավելի ակտիվորեն է միջամտում բնական պրոցեսներին, բնությունը վերափոխելով իր պահանջմունքներին համապատասխան։ Բնության այդ վերափոխությունը առանձնապես լայն թափ և ռացիոնալ բնույթ է ստանում սոցիալիստական հասարակության մեջ, որտեղ գիտությունն ու տեխնիկան օգտագործվում են ոչ թե մեծամասնության շահագործման հաշվին փոքրաթիվ մարդկանց հարստացման գիշատիչ նպատակների համար, այլ ի սպաս են դրված սոցիալիստական ամբողջ հասարակությանը։ Հսկայական պոտենցիալ հարստությունների աղբյուր են նաև ընդերքի օգտակար հանածոները, որոնց յուրացումը մարդու կողմից գիտության ու տեխնիկայի զարգացման հետևանքով ավելի ու ավելի է աճում և առավել ռացիոնալ բնույթ է ստանում սոցիալիստական հասարակության պայմաններում։ Այսպիսով, մարդկային գործունեությունը հիմնականում կապված է երկրի մակերևույթային շերտի՝ հողի և ընդերքի օգտագործման հետ։

Թեև իր կյանքի արշալույսին մարդն օգտագործում էր հողի և ջրի բուսական ու կենդանական բնական աշխարհը, որի վրա ներգործելով նա հազարամյակների ընթացքում ստեղծեց կուլտուրական բույսեր ու ընտանի կենդանիներ, սակայն բնական այդ գործոնները մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց կորցնում են իրենց նշանակությունը և առաջին պլանի վրա է հանդես գալիս երկրի հողաշերտի և ընդերքի խելացի օգտագործումը։

Այսպիսով, թեև աշխարհագրական միջավայրը որոշիչ ազդեցություն չունի հասարակության զարգացման վրա, սակայն այդ միջավայրը հասարակության նյութական կյանքի մշտական ու անհրաժեշտ պայմաններից մեկն է։ Շրջանացումը պետք է կատարվի բնական գործոնների շրջանացման հետ սերտորեն շաղկապված, և այն ըստ էության տնտեսական-աշխարհագրական շրջանացում է։ Այդ հանգամանքը առանձնապես հստակ է դրսևորվում իրենց բարդ օրոգրաֆիայով աչքի ընկնող տերիտորիաների վերաբերմամբ, որտեղ բնական գործոնները այնքան էլ չեն ենթարկվում լայնական և միօրեական տեղաբաշխման օրինաչափություններին, նրանք գրեթե ամբողջովին որոշվում են լեռնային ռելեֆի ուղղաձիգ զոնալությամբ, որը գոյացնում է մի շարք բնապատմական մարզեր, որոնք սովորաբար հանդիսանում են նաև բնական-տնտեսական մարզեր իրենց հատուկ յուրօրինակությամբ։

Շրջանացման հիմքում ընկած տնտեսական կոմպլեքսում գլխավոր գործոնը սովորաբար արդյունաբերությունն է, ապա գալիս է այս կամ այն չափով նրա հետ կապված գյուղատնտեսությունը և, վերջապես, նրանց սպասարկող տրանսպորտը։ Սակայն այդ չի նշանակում, որ շրջանի առանձնացման հարցում այս կամ այն դեպքում գյուղատնտեսությունն ու տրանսպորտը չեն կարող առաջնակարգ նշանակություն ունենալ։

Այսպիսով, տնտեսական շրջանացումը ոչ թե առանձին ճյուղերի, այլ ամբողջ տնտեսության շրջանացումն է։ Այս կամ այն տնտեսական շրջանը կարող է կրել առավելապես արդյունաբերական կամ գյուղատնտեսական բնույթ, բայց տնտեսական շրջանացման ժամանակ տերիտորիան չի կարելի անդամահատել առանձին արդյունաբերական կամ գյուղատնտեսական շրջանների։ Հատուկ նպատակներով կարող են առանձնացվել գյուղատնտեսական շրջաններ, բայց նման դեպքերում, հասկացությունների շփոթ թույլ չտալու համար, պետք է խոսել գյուղատնտեսական գոտիների ու ենթագոտիների, միկրոգոտիների մասին, որտեղ տերիտորիայի երևույթները խմբավորում են ըստ նմանության, ըստ իրենց միատեսակության։ Ի տարբերություն գոտուց, շրջանը ենթադրում է կոմպլեքսայնորեն կապված երևույթների առանձնացում, անկախ նրանից, թե դրանք վերաբերում են բնական կամ տնտեսական գործոններին կամ երկուսին էլ միասին։

Տնտեսական շրջանի առանձնացման համար չկան որոշակի համապարփակ չափանիշներ, չկան վիճակագրական այնպիսի հատկանիշներ, որոնց ընդունումը թույլ տար սահմանել առանձնացվող տերիտորիաների տերիտորիալ կազմն ու սահմանները։ Տերիտորիաների շրջանացում կատարելիս կարևոր է որպես շրջան առանձնացնել երկրի որոշ, տնտեսական տեսակետից յուրահատուկ ամբողջական տերիտորիա, «որը,—ինչպես մատնանշված է ՀԿԳԿ-ի թեզիսներում և շրջանացման վերաբերյալ Պետպլանի զեկուցման մեջ,— բնական առանձնահատկությունների, կապիտալ արժեքների (այսինքն՝ անցյալ ժամանակի կուլտուրական կուտակումների), բնակչության, նրա կենցաղի և արտադրական ու ընդհանրապես տնտեսական գործունեության համար նրա պատրաստվածության որոշակի կոմբինացիայի շնորհիվ մի որոշ պոտենցիա ներկայացներ՝ երկրի ընդհանուր տնտեսական դինամիկայում այս կամ այն ֆունկցիան կատարելու համար»[1]։

Երկրի տնտեսական շրջանացումը, ինչպես նշեցինք, պետք է նպաստի տնտեսության ռացիոնալ տերիտորիալ կազմակերպմանը հօգուտ հասարակական աշխատանքի արտադրողականության աճման։

Տնտեսական շրջանը առանձնացնելիս մոտավորապես նշված ամբողջական տնտեսական տերիտորիան իր տերիտորիալ կազմի և ընդգրկման սահմանների տեսակետից ճշտվում է ենթաշրջաններ առանձնացնելու և շրջանակազմության հիմնական գործոնների գծով նրանց միջև կապեր հաստատելու միջոցով։ Քանի որ գյուղատնտեսական գործունեությունը բնութագրվում է շատ ավելի հավասարաչափ տերիտորիալ տեղաբաշխմամբ, քան տնտեսության մյուս ճյուղերը և սերտորեն կապված է բնական պայմանների հետ,

[1] Сб. „Экономическое районирование России". 1922. стр. 32.

ենթաշրջաններ և ընդհանրապես ավելի մանր տերիտորիալ միավորներ առանձնացնելիս բնական-տնտեսական գործոնների ուսումնասիրությունը նպատակահարմար է կատարել առաջին հերթին գյուղատնտեսության տեղաբաշխման կապակցությամբ, ստացված ֆոնի վրա տեղադրելով մյուս ճյուղերը և սահմանելով նրանց փոխադարձ կապերը։ Դա հնարավորություն է տալիս վգալիորեն ավելի ճիշտ որոշել առանձնացվող շրջանների կազմն ու սահմանները։

* * *

Թեև Հայկական ՍՍՌ իր տերիտորիայով փոքր է, սակայն լեռնային բարդ ռելեֆի պատճառով աչքի է ընկնում բնական պայմանների մեծ բազմազանությամբ։ Այստեղ առկա են Սովետական Միության ընդարձակ տերիտորիաներին հատուկ գրեթե բոլոր բնական գոտիները՝ անապատային-կիսաանապատային գոտուց սկսած մինչև լեռնային ալպյան գոտին։

Ռեսպուբլիկայի տերիտորիան իրենից ներկայացնում է ծովի մակերևույթից 400 մինչև 4095 մետր բարձրության վրա գտնվող հրաբխային ու ծալքավոր լեռնաշղթաների, բարձրավանդակների, կիրճերի և ողողակային հովիտների մի բարդ կոմպլեքս։ Ըստ գոտիների այդ տերիտորիան բաշխվում է հետևյալ հարաբերակցությամբ. ծովի մակերևույթից մինչև 500 մ՝ 3%, 500—1000 մ՝ 9,7%, 1000—2000 մ՝ 50%, 2000—2500 մ՝ 27%, 2500—3000 մ՝ 10% և 3000 մ ավել՝ 3%։ Երկրի 77 տոկոսը ընկած է ծովի մակերևույթից 1000—1500 մետր բարձրության վրա։

Հայկական ՍՍՌ կլիման աչքի է ընկնում բացառիկ բազմազանությամբ, որն իր հերթին որոշում է հողերի և բուսական աշխարհի բազմազանությունը։ Բազմաթիվ լեռնաշղթաների առկայությունը ազդել է ռեսպուբլիկայում իրենց բնական պայմաններով մեկուսացած շրջանների առաջացման վրա, որոնք ըստ էության բնական-տնտեսական շրջաններ են։

Ըստ բնական պայմանների Հայկական ՍՍՌ-ում ընդունված է առանձնացնել 7 շրջան՝ Արարատյան գոգավորությունը, Շիրակը, Լոռի-Փամբակը, Հյուսիս-արևելյան անտառային շրջանը, Սևանի ավազանը, Դարալագյազը և Զանգեզուրը։

Արարատյան գոգավորությունն ընդգրկում է Արաքս գետի միջին հոսանքի և նրա ձախ վտակների շրջանը, որը գտնվում է Արագածի՝ մասսիվի, Գեղամի, Ուրցի լեռնաշղթաների և Արաքս գետի միջև։ Ըստ բնական պայմանների այստեղ կարելի է առանձնացնել մի քանի ենթաշրջան կամ, ավելի ճիշտ, գոտի. անապատային-տափաստանային Արարատյան դաշտը՝ 900—1000 մ նիշերի սահմաններում, որն ունի խիստ ցամաքային կլիմա, երկարատև չորային ու շոգ ամառ, ցուրտ ու սակավաձյուն ձմեռ և որտեղ տեղումների քանակը հասնում է 360 մմ, նախալեռնային չոր-տափաստանային գոտին՝ մինչև 1400—1600 մ նիշերով (Թալինի, Աշտարակի, Կոտայքի նախալեռները), որն ունի չափավոր չորային կլիմա և որտեղ տեղումների քանակը հասնում է մոտ 500 մմ, լեռնային-տափաստանային չափավոր չորային գոտին՝ մինչև 1800 մ բարձրությամբ և բարձր լեռնային, չափավոր խոնավ գոտին՝ 1800—2400 մ բարձրությամբ, այն է՝ Ապարանի և Ախտայի բարձր լեռնա-

յին տափաստանները, որոնցից ավելի բարձր տարածվում են լեռնային ցուրտ կլիմա ունեցող մերձալպյան և ալպյան արոտավայրերը։

Շիրակի շրջանն ընդգրկում է ռեսպուբլիկայի հյուսիս-արևմտյան մասը, Արագածից մինչև խոնավ լեռները, որտեղ մտնում են նախալեռնային չոր տափաստանային գոտին՝ մինչև 1700—1800 մ բարձրությամբ, լեռնա-տափաստանային խոնավ գոտին՝ 1700—2400 մ բարձրությամբ, ավելի քան 600 մմ տեղումներով և լեռնամարգագետնային գոտին՝ մերձալպյան և ալպյան արոտավայրերով։

Լոռի-Փամբակի շրջանը, որը արևմուտքից սահմանագծված է խոնավ լեռներով, արևելքից՝ Դեբեդ և Աղստաֆա գետերի ջրաբաժանով, իսկ հարավից Փամբակի լեռնաշղթայով, աչքի է ընկնում իր չափավոր կլիմայով՝ խոնավ ամառով և համեմատաբար մեղմ ձմեռով։ Այստեղ կարող են առանձնացվել լեռնա-անտառային գոտին՝ մինչև 1500 մ բարձրությամբ, լեռնա-տափաստանային գոտին՝ 1500—2000 մ բարձրությամբ և լեռնա-մարգագետնային գոտին՝ 2000 մ ավելի բարձր։

Հյուսիս-արևելյան անտառային շրջանն ընդգրկում է Աղստև, Տավուշ, Ինձորուտ և այլ գետերի վերին հոսանքի ավազանները։ Այդ բնական շրջանը կարելի է բաժանել հետևյալ գոտիների. անտառա-տափաստանային գոտի մինչև 900 մ բարձրությամբ և տաք ու խոնավ մեղմ կլիմայով լեռնա-անտառային գոտի՝ 900—1700 մ բարձրությամբ չափավոր տաք ու խոնավ կլիմայով, լեռնա-տափաստանային գոտի՝ 2000—2200 մ բարձրությամբ և լեռնա-մարգագետնային գոտի՝ 2200 մ ավելի բարձր։

Սևանի ավազանը աչքի է ընկնում լեռնային ցուրտ կլիմայով։ Տեղումների տարեկան քանակը հասնում է 400—700 մմ։ Սևանի ավազանի եղանակը առավել տաք է լճի հյուսիս-արևելյան ափերին՝ Արեգունի լեռնաշղթայի ստորոտներում։ Սևանի ավազանում առանձնացվում են չոր տափաստանային գոտին՝ 2000 մ բարձրությամբ, լեռնա-տափաստանային գոտին՝ մինչև 2400 մ բարձրությամբ և ավելի բարձր՝ լեռնա-մարգագետնային մերձալպյան և ալպյան գոտին։

Դարալագյազը, որը բնական տեսակետից խոր կիրճերով կտրտված լեռնային յուրահատուկ շրջան է, ընդգրկում է Արփա գետի ավազանը։ Այստեղ առանձնացվում են Արփա գետի հովիտը մինչև 1400 մ բարձրությամբ չոր ու շոգ կլիմայով, այնուհետև մինչև 1900 մ բարձրությամբ լեռնա-տափաստանային գոտին՝ տաք ու չոր կլիմայով և վերջապես, բարձր լեռնա-տափաստանային, տեղ-տեղ չորային գոտին՝ 1900—2400 մ նիշերի վրա, իսկ դրանից բարձր տարածվում է ամառային արոտավայրերի լեռնա-մարգագետնային գոտին։

Զանգեզուրն ընդգրկում է Որոտան, Ողջի և Մեղրի գետերի ավազանները։ Շրջանը աչքի է ընկնում կտրտված լեռնային ռելեֆով և ցայտուն տրտահայտված ուղղաձիգ գոտիներով։ Բնական պայմանների տեսակետից այստեղ կարելի է առանձնացնել կիսաանապատային մերձարևադարձային գոտին (Մեղրու շրջանի հարավային մասը)՝ մինչև 1000 մ բարձրությամբ, շոգ ու չոր կլիմայով և մեղմ ձմեռով, անտառա-տափաստանային գոտին՝ մինչև 1400 մ բարձրությամբ և չոր ու տաք կլիմայով, լեռնա-անտառային գոտին՝ մինչև 2000 մ բարձրությամբ և տաք, համեմատաբար խոնավ չափավոր կլիմայով, լեռնա-տափաստանային գոտին՝ մինչև 2400 մ բարձրությամբ և երկարատև

ձմեռով, կայուն ձյունածածկով, 500—600 մմ տեղումներով, դրանից բարձր տարածվում է լեռնա-մարգագետնային գոտին մերձալպյան և ալպյան արոտավայրերով։

Այդ բնական կամ բնական-տնտեսական շրջաններն ու գոտիները հիմք են հանդիսանում ռեսպուբլիկայի տնտեսա-աշխարհագրական շրջանացման համար։

Քանի որ բնական պայմաններն ամենից սերտորեն կապված են գյուղատնտեսական գործունեության հետ, նախքան ռեսպուբլիկայի կոմպլեքսային տնտեսական շրջանների սահմանմանն անցնելը, հարկավոր է քննել այդ շրջանների գյուղատնտեսական բնութագիրը, որը կհեշտացնի մեր մոտեցումը տնտեսական ընդհանուր շրջանացմանը և հնարավորություն կտա ավելի պարզ պատկերացում կազմելու, թե իրար նկատմամբ ինչ հարաբերակցության մեջ են ռեսպուբլիկայի տնտեսական շրջանները և քննարկվող բնական-տնտեսական շրջանները։

Բնական և տնտեսական գործոնների հիման վրա, հաշվի առնելով գյուղատնտեսության զարգացման հեռանկարները, մեր նախորդ աշխատություններում ռեսպուբլիկայում առանձնացված են 9 գյուղատնտեսական գոտիներ, որոնց մասին գյուղատնտեսության տեղաբաշխման ու մասնագիտացման հարցերի վերաբերյալ հիմնական զեկուցման մեջ, որ ներկայացվել է Լենինի անվան Գյուղատնտեսական գիտությունների Համամիութենական ակադեմիային, մատնանշված է, որ առանձնացված «գյուղատնտեսական գոտիներն ըստ էության իրենցից ներկայացնում են բնական-տնտեսական շրջաններ ու ենթաշրջաններ՝ մոտավորապես միատեսակ գյուղատնտեսական բնութագրով. այդ գոտիների ներսում առանձնացված են ենթագոտիներ ըստ բարձրության նիշերի՝ հաշվի առնելով գյուղատնտեսական ավելի կոտորակային մասնագիտացումը»[1]։ Այսպիսով, բարձրության համապատասխան նիշերով ենթագոտիների ստորաբաժանված վերոհիշյալ բնական գոտիները գրեթե ամբողջովին համապատասխանում են մեր առանձնացրած գյուղատնտեսական գոտիներին ու ենթագոտիներին, որոնք մոտավորապես ուրվագծված են բնակչության գյուղատնտեսական գործունեության նմանության և տարբերության հատկանիշների համաձայն։ «Գյուղատնտեսական գոտիներ» անունն ընտրված է ցույց տալու, որ, ինչպես նշված է վերևում, համապատասխան տերիտորիաների առանձնացումը տվյալ դեպքում կատարված է ոչ թե ըստ տնտեսական կոմպլեքսի, այլ ըստ մեկ ճյուղի՝ գյուղատնտեսության տերիտորիալ բաշխման։

Գյուղատնտեսական գոտիներն առանձնացնելիս աշխատանքների տրվյալ ստադիայում վարչական շրջաններն իրենց տերիտորիայով ամբողջովին վերագրված են այս կամ այն գոտուն, ենթագոտիների բաժանելու միջոցով ճշտելով նրանց գյուղատնտեսական մասնագիտացումը։ Այդ արված է պրակտիկ նպատակներով, հաշվի առնելով նյութերից օգտվելու և միջոցառումներն ադմինիստրատիվ շրջանների տեսանկյունից կենսագործելու հարմարությունը։

Գյուղատնտեսական գոտիների սխեման բերված է մեր «Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության տեղաբաշխման ու մասնագիտացման հարցերը» հոդվա-

[1] Материалы совещания по вопросам размещения и специализации сельского хозяйства в ВАСХНИЛ-е, имевшего место с 14 мая по 14 апреля 1957 г.

ծում[1]։ Հետագայում այդ սխեմայում մտցված են փոքր ուղղումներ՝ առանձնացված է Դարալագյազի գյուղատնտեսական գոտին, ճշտված են որոշ ենթագոտիների բարձունքային նիշերը։

Առանձնացված գյուղատնտեսական գոտիները ներկայացնում են բնական-տնտեսական շրջաններ ու ենթաշրջաններ՝ մոտավորապես միատեսակ գյուղատնտեսական բնութագրով։ Որպեսզի ավելի պարզ պատկերացնենք, թե իրար նկատմամբ ինչ հարաբերակցության մեջ են ռեսպուբլիկայի տնտեսական շրջանները և այդ գյուղատնտեսական գոտիները, նշենք, որ ռեսպուբլիկայում ըստ տնտեսության կոմպլեքսի կարող են առանձնացվել մոտավորապես 4 տնտեսական շրջաններ՝ Կենտրոնական, Հյուսիս-արևմտյան, Հյուսիսային և Հարավային։ Կենտրոնական շրջանի կազմում մտնում են հետևյալ տնտեսական ենթաշրջանները՝ Արարատյան դաշտը, Արարատյան գոգավորության նախալեռները, նրա լեռնաշխարհը, Սևանի ավազանը և Դարալագյազը։ Այսպիսով, բերված գյուղատնտեսական 9 գոտուց 5-ը մտնում են Կենտրոնական տնտեսական շրջանի մեջ՝ որպես նրա ենթաշրջանները։ Հյուսիս-արևմտյան տնտեսական շրջանը կազմում է գյուղատնտեսական մեկ գոտի՝ Շիրակի գոտին։ Հյուսիսային տնտեսական շրջանի կազմում մտնում են Լոռի-Փամբակի և Հյուսիս-արևելյան անտառային տնտեսական ենթաշրջանները, որոնք համապատասխանում են երկու համանուն գյուղատնտեսական գոտիներին։ Եվ, վերջապես, Հարավային տնտեսական շրջանը ևս կազմում է մեկ գյուղատնտեսական գոտի՝ Զանգեզուրի գոտին։ Այսպիսով, ռեսպուբլիկայում առանձնացված գյուղատնտեսական գոտիները համապատասխանում են տնտեսական առանձին շրջաններին ու ենթաշրջաններին, և այդ գոտիների արտադրական բնութագիրը ըստ էության հանդիսանում է տնտեսական շրջանների ու ենթաշրջանների գյուղատնտեսական բնութագիրը։

Առանձնացված տնտեսական շրջանների ստորև բերվող հակիրճ բնութագիրը պատկերացում է տալիս ռեսպուբլիկայի տնտեսության մեջ դրանցից յուրաքանչյուրի դերի մասին, ինչպես և այն մասին, թե նրա առանձին ենթաշրջանները ինչ չափով են շաղկապված որպես տնտեսական մեկ ամբողջություն։

1. Կենտրոնական տնտեսական շրջանը ենթաշրջանների վերոհիշյալ կազմով ռեսպուբլիկայի կարևորագույն, տերիտորիայով ու բնակչությամբ առավել նշանակալի տնտեսական շրջանն է, որը տալիս է ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի ավելի քան 75%-ը և գյուղատնտեսական արտադրանքի 80%-ը։ Շրջանի էներգետիկ բազան Հրազդանի կասկադի էլեկտրակայաններն են։ Շրջանի տնտեսական մասնագիտացումը որոշում են ծանր արդյունաբերության գծով՝ քիմիան, մեքենաշինությունը, թեթև մետաղների մետալուրգիան, սննդարդյունաբերության գծով՝ գինու, կոնյակի, կոնսերվեղենի, ծխախոտի արտադրությունը։ Արդյունաբերության այդ ճյուղերն ունեն միութենական նշանակություն։ Բացի դրանցից, շրջանում զարգացած է շինանյութերի, մետաքսի, բրգի, կաշվի-կոշկեղենի, կարի, յուղի-ճարպեղենի, հրուշակեղենի արդյունաբերությունը և այլն։ Գյուղատնտեսության կարևոր ճյուղերն են՝ խաղողագործությունը, պտղաբուծությունը, բամբակագործությունը, ծխախոտագործությունը, բանջարաբուծությունը, ինչպես նաև անասնաբու-

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 4, 1956, էջ 43—63։

ծությունը, հացահատիկային տնտեսությունը, կարտոֆիլի մշակությունը։ Զարգանում է շերամապահությունը։ Այս շրջանում է գտնվում ռեսպուբլիկայի մայրաքաղաք, միութենական նշանակություն ունեցող արդյունաբերական ու կուլտուրական խոշոր կենտրոն Երևանը՝ 400 հազար բնակչությամբ։

Այստեղ շրջանակազմության հիմնական գործոններն են.

ա) Արարատյան դաշտի և Արարատյան գոգավորության սահմանագլխին գտնվող և արագ վարգացող խոշոր քաղաքի՝ Երևանի առկայությունը.

բ) հզոր էներգետիկ բաղան՝ գործող և կառուցվող հիդրոկայանների կասկադը Հրազդան գետի վրա.

գ) զարգացած և զարգացող ոռոգման ցանցը, որն ընդգրկում է Արարատյան դաշտի, Արարատյան գոգավորության նախալեռնային և լեռնային շրջանների առավել պիտանի հողերը և որը ներկայացնում է մի միասնական ոռոգիչ ցանց.

դ) հիմնական ենթաշրջաններում հանքային հումքի առկայությունը, որը բաղա է հանդիսանում շրջանում քիմիական արդյունաբերության, թեթև մետաղների արտադրության, շինանյութերի արդյունաբերության և այլ ճյուղերի զարգացման համար.

ե) Արարատյան դաշտի և Արարատյան գոգավորության նախալեռների ինտենսիվ գյուղատնտեսությունը աճող ոռոգման բազայի վրա՝ խաղողագործության, պտղաբուծության, տեխնիկական կուլտուրաների, բանջարաբուծության և կաթնատու անասնաբուծության զարգացած ու զարգացող ճյուղերով, որոնք վերամշակող արդյունաբերության և Երևան քաղաքին ու արդյունաբերական մյուս օջախներին մերձքաղաքային գյուղատնտեսության մթերքներ մատակարարելու հիմքն են հանդիսանում.

զ) Արարատյան գոգավորության լեռնային ենթաշրջանների (Ախտա-Ապարանի մասսիվի) ու Սևանի ավազանի գյուղատնտեսության և զարգացող արդյունաբերության կապերը Երևան քաղաքի և շրջանի արդյունաբերական մյուս օջախների հետ՝ նրանց կարտոֆիլ, բանջարեղենի որոշ տեսակներ, մասամբ կաթնամթերքներ, միս, ձուկ մատակարարելու գծով, ինչպես նաև փոխադարձ կապերը էներգետիկ տնտեսության, հանքային հումք և արդյունաբերական ապրանքներ մատակարարելու գծով.

է) ենթաշրջանի ճանապարհա-տրանսպորտային զարգացած կապերը Երևանի հետ և իրենց միջև.

ը) ենթաշրջանների բնակչության կուլտուր-կենցաղային կապերը Երևան քաղաքի հետ։

Այս ամենը բավականաչափ հիմնավորում է Կենտրոնական շրջանի տերիտորիալ կազմը։

2. Հյուսիս-արևմտյան կամ Շիրակի տնտեսական շրջանը համապատասխանում է Շիրակի գյուղատնտեսական գոտուն։ Շրջանում է գտնվում իր նշանակությամբ ռեսպուբլիկայի երկրորդ քաղաքը՝ Լենինականը մոտ 110 հազար բնակչությամբ։ Քաղաքը երկաթուղային ու խճուղային ճանապարհների հանգույց է։ Շրջանի արդյունաբերության առավել կարևոր ճյուղերն են շինանյութերի, Անիի ու Արթիկի տուֆի և Անիի ու Պեմզաշենի պեմզայի հանույթն ու մշակումը, բամբակեղենի արդյունաբերությունը, որի գլխավոր ձեռնարկություններն են մանածագործական ու տրիկոտաժային ֆաբրիկաները միավորող Լենինականի տեքստիլ խոշոր կոմբինատը, մեքենաշինությունը՝ քար-

հատիչ և քարաֆրեզեբային մեքենաների, հեծանվային, մետաղամշակման, վագոնների ու շոգեկառքերի վերանորոգման գործարանների կազմով և այլն, սննդարդյունաբերությունը՝ լավ սարքավորված Լենինականի մսի կոմբինատով, Սպիտակում գտնվող շաքարի գործարանով, շրջանում եղած պանրի գործարաններով, թեթև արդյունաբերությունը՝ կոշկի և կարի գործարաններով։ Հանքային շինանյութերի հանույթն ու մշակումը աճման մեծ հեռանկարներ ունեն և արդեն այժմ հայտնի չափով որոշում են շրջանի միութենական մասնագիտացումը։ Շրջանի զարգացման էներգետիկ բազան ռեսպուբլիկայի էլեկտրակայանների փունջն է, որի մեջ մտնում է նաև շրջանի Լենգէս էլեկտրակայանը։

Շրջանի տնտեսության մեջ գրեթե միատեսակ դեր են խաղում հացահատիկային տնտեսությունը և կաթնատու-մսատու անասնաբուծությունը։ Շրջանում զարգացած է ճակնդեղի, կարտոֆիլի մշակությունը և մերձքաղաքային բանջարաբուծությունը։ Գյուղատնտեսության մեջ մեծ դեր է խաղում Շիրակի բարձրավանդակի ջրովի հողագործությունը, որը հետագա զարգացման զգալի հեռանկարներ ունի։ Շրջանում կան ամառային լավ արոտավայրեր։

Շիրակի վարչական շրջանները տնտեսական ու կուլտուրական տեսակետից սերտորեն կապված են իրենց կենտրոնի՝ Լենինական քաղաքի հետ։

3. Հյուսիսային տնտեսական շրջանը միավորում է երկու ենթաշրջան՝ Լոռի-Փամբակի և Հյուսիս-արևելյան անտառային ենթաշրջանները։ Լոռի-Փամբակի ենթաշրջանում է գտնվում իր նշանակությամբ ռեսպուբլիկայի երրորդ քաղաքը՝ Կիրովականը, որն ունի 45 հազար բնակչություն։ Քաղաքը գտնվում է Փամբակ գետի հովտում, Երևան-Թբիլիսի երկաթգծի և Լենինական-Աղստև խճուղու վրա։ Այստեղ հիմնականում զարգացած է քիմիական արդյունաբերությունը, գլխավորապես հանքային պարարտանյութերի արտադրության գծով։ Զարգացած է նաև տեքստիլ-տրիկոտաժային արդյունաբերությունը՝ կորդի և մետաքսյա բարձրորակ տրիկոտաժի արտադրության գծով։ Կա կաթի ու մսի արդյունաբերության համար սարքավորում արտադրող մեքենաշինական գործարան։

Այդ շրջանի արդյունաբերական մյուս կարևոր կենտրոնը պղնձաձուլական արդյունարերության հին կենտրոն Ալավերդին է, որը գտնվում է Դեբետ գետի ձախ ափին, Երևան—Թբիլիսի երկաթուղային մագիստրալի վրա։ Շրջանում վաղուց հայտնի են պղնձահանքերը։ Քաղաքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունը պղնձաձուլական գործարանն է, որը սովետական ժամանակաշրջանում ամբողջովին վերակառուցված է։ Գործարանը տեղական հանքաքարի և Զանգեզուրից ստացվող պղնձի կոնցենտրատների բազայի վրա թողարկում է սև և էլեկտրոլիզային զտված պղինձ։ Պղնձարդյունաբերության մնացորդների բազայի վրա Ալավերդում զարգացել է քիմիական արդյունաբերությունը՝ ծծմբաթթվի, սուպերֆոսֆատի և պղնձարջասպի արտադրության գծով։ Պղնձարդյունաբերությունը և քիմիական արդյունաբերությունը ունեն միութենական նշանակություն։ Այդպիսի նշանակություն ունի նաև Թումանյանի հրակայուն նյութերի գործարանը, որն իր արտադրանքը, Հայաստանի ձեռնարկություններից զատ, ուղարկում է նաև Վրաստանի, Ադրբեջանի ու Հյուսիսային Կովկասի ձեռնարկություններին։

Շրջանի զարդացման էներդետիկ բազան է Զորագէս խոշոր էլեկտրակայանը, որն այժմ մտնում է ռեսպուբլիկայի էներգետիկ փնջի մեջ։ Ներկայումս

շրջանը արդյունաբերական կարիքների համար լրացուցիչ էներգիա է ստանում Հրազդանի կասկադից։

Շրջանի արևմտյան մասում զարգացած է յուղագործական-սլանրագործական արդյունաբերությունը։ Այստեղ (Կալինինոյում) արտադրվում է բարձրորակ շվեյցարական պանիր։ Շրջանի արևելյան մասում զարգացած է փայտամշակման արդյունաբերությունը, որի առավել խոշոր ձեռնարկությունները գտնվում են Իջևանում, Սևքարում և Դիլիջանում։ Մյուս ճյուղերից հարկ է հիշել կոնսերվեղենի և գինեգործական զարգացող արդյունաբերությունը։ Շրջանում համեմատաբար բարձր զարգացման է հասել դուրգագործությունը։

Շրջանի արևմտյան մասի (Լոռի-Փամբակի ենթաշրջան) գյուղատնտեսության համար բնորոշ է կաթնա-տոհմաբուծական անասնաբուծության և կարտոֆիլի մշակության բարձր զարգացումը։ Հյուսիս-արևելյան անտառային ենթաշրջանում զարգացած են ծխախոտագործությունը, այգեգործությունը, պտղաբուծությունը, այդ թվում մերձարևադարձային պտղաբուծությունը, մասամբ շերամապահությունը։ Շրջանում զարգացած են նաև հացահատիկային տնտեսությունը և անասնաբուծությունը։

Հյուսիսային տնտեսական շրջանում շրջանակազմության հիմնական գործոններ են արդյունաբերական հանգույցներ Կիրովականը և Ալավերդին։ Գլխավորապես քիմիական արդյունաբերության դծով արդյունաբերական հետագա աճի խոշոր հեռանկարներ ունի Կիրովականը։ Աճում է նաև Ալավերդու պղնձարդյունաբերությունը։

Շրջանի տրանսպորտային կապերն իրականացվում են երկաթուղային մագիստրալով և Երևան—Դիլիջան—Կիրովական — Ստեփանավան — Կալինինո—Թբիլիսի և Երևան—Դիլիջան—Իջևան—Ազստև խճուղիներով։ Իջևանի վրայով Երևան—Ազստև երկաթուղու նախատեսված շինարարությունը մեծ նշանակություն կունենա հյուսիս-արևելյան ենթաշրջանի տնտեսական վերելքի համար։

4. Հարավային տնտեսական շրջանը՝ Զանգեզուրը, ինչպես ասված է, համապատասխանում է համանուն գյուղատնտեսական գոտուն։ Հարավային Հայաստանը ևս վաղուց ի վեր հանդիսանում է պղնձարդյունաբերության կարևոր կենտրոն, որտեղ այդ արդյունաբերությունը մինչև վերջերս կենտրոնացած էր Ղափան քաղաքում։ Հիմնականում հետպատերազմյան ժամանակաշրջանում կատարված երկրաբանական հետախուզումները պղնձի-մոլիբդենի խոշոր հանքավայրեր հայտնաբերեցին Զանգեզուրում, վերջինս դարձնելով Սովետական Միության հանքային կարևորագույն շրջաններից մեկը։ Մեծ նշանակություն ունեն նաև կրաքարերի, նեֆելինի սիենիտների, պեմզայի, հրակայուն կավերի, մարմարի և այլ հանքավայրերը։

Զանգեզուրի արդյունաբերության առաջատար ճյուղը լեռնահանքային արդյունաբերությունն է։ Բացի Ղափանից, այդ ճյուղի ձեռնարկություններ են կառուցվում և գործում նոր հանքավայրերում՝ Քաջարանում, Ագարակում, Դաստակերտում։ Շրջանը հարուստ է նաև հիդրոէներգետիկ ռեսուրսներով։ Բացի համեմատաբար փոքր գործող էլեկտրակայաններից, որոնք կառուցված են Ողջի գետի վրա, նախատեսված է խոշոր էլեկտրակայաններ կառուցել Որոտան գետի վրա։ Դրանցից ամենախոշորի՝ Տաթևի էլեկտրակայանի կառուցումը սկսվելու է 6-րդ հնգամյակում։ Մինչև այդ էլեկտրակայանի ավարտումը

Զանգեզուրի լեռնահանքային ձեռնարկությունները էներգիա կստանան Հրազդանի կասկադից։

Շրջանում զարգանում է կոնսերվեղենի, գինեգործական, յուղագործական-պանրագործական, մսի, մետաքսի և փայտամշակման արդյունաբերությունը։

Շրջանի գյուղատնտեսությունը կլիմայական պայմանների մեծ բազմազանության հետևանքով ներկայացված է տարբեր ճյուղերով՝ մերձարևադարձային պտղաբուծությունից սկսած մինչև ալպյան անասնաբուծությունը։

Անասնաբուծության ու հացահատիկային տնտեսության հետ մեկտեղ, շրջանի ենթագոտիներում ու միկրոգոտիներում զարգանում են խաղողագործությունը, պտղաբուծությունը (այդ թվում մերձարևադարձային), ծխախոտագործությունն ու շերամապահությունը։ Շրջանի արդյունաբերական կենտրոնների բնակչության աճման կապակցությամբ մեծ նշանակություն են ստանում մերձքաղաքային բանջարաբուծությունն ու անասնաբուծությունը։

Զանգեզուրի տրանսպորտային կապերն իրականացվում են Երևան — Մի՛կոյան — Բորիսովկա — Անգեղակոթ — Գորիս — Ղափան — Քաջարան — մեղրի խճուղով, ինչպես և Երևան — Ջուլֆա — Բաքու երկաթուղային մագիստրալի Ղափան — Մինջևան ճյուղով, որին հարում է Զանգեզուրի միայն հարավային մասը։

Զանգեզուրը ինդուստրիալ զարգացման չափազանց մեծ հեռանկարներ ունի պղնձա-մոլիբդենային արդյունաբերության և դրա հետ կապված քիմիական արդյունաբերության նախատեսված աճման, ինչպես և Որոտան գետի վրա խոշոր էլեկտրակայանների կասկադի կառուցման կապակցությամբ։

Ներկայիս տրանսպորտային կապերը խիստ սահմանափակում են Զանգեզուրի տնտեսական զարգացումը։ Բոյություն ունեցող հարավային երկաթուղային ճյուղի հետագա զարգացումը, որն անհրաժեշտ է լեռնա-հանքային կոմբինատներն ու Որոտանի կասկադի էլեկտրակայանների կառուցումներն ընդգրկելու համար, թույլ կտա երկաթուղային կապ իրականացնել Զանգեզուրի ներքին շրջանների միջև և կնպաստի այդ կարևոր շրջանի արագ տնտեսական վերելքին։

* * *

Ներռնսպուբլիկական չորս տնտեսական շրջանների բերված սխեման և նրանց համառոտ բնութագիրը ցույց են տալիս, որ այդ շրջաններն իրենց տնտեսական նշանակությամբ և ձևավորվածության աստիճանով հավասարարժեք չեն։ Առավել նշանակալի ու ձևավորված է Կենտրոնական տնտեսական շրջանը, որն ըստ էության ունի միութենական նշանակություն։ Նրա հիմնական տերիտորիալ կոմպոնենտներն են Երևանը իր զարգացած արդյունաբերությամբ և Արարատյան դաշտը, իր ինտենսիվ գյուղատնտեսությամբ։ Արարատյան գոգավորության նախալեռների և լեռնաշխարհի ենթաշրջանները, կանգնած են իրենց տնտեսական ձևավորման ուղու վրա՝ որպես տերիտորիալ-արտադրական մասսիվներ, մի հայտնի չափով հավասարարժեք առաջին երկուսին. ա) նախալեռների ենթաշրջանը՝ զարգացող ոռոգման շնորհիվ, հիմնականում որպես ինտենսիվ գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության ենթաշրջան, բ) լեռնաշխարհը՝ գլխավորապես արգնա՛ոզային արտադրության բազայի վրա Ախտայի խոշոր արդյունաբերական հան-

գույցի ստեղծման շնորհիվ, որպես զարգացած արդյունաբերության ենթաշրջան։ Սևանի ավազանը, շնորհիվ երկաթուղու ավարտվող շինարարության և գյուղատնտեսության զարգացման հեռանկարների, նույնպես զգալիորեն կբարձրացնի իր նշանակությունը Կենտրոնական շրջանի տնտեսական կոմպլեքսում։ Այդ ենթաշրջանի արդյունաբերության զարգացումը, ըստ երևույթին կապված կլինի հանքային ռեսուրսների (օրինակ՝ ուլտրահիմնական տեսակների) օգտագործման և գյուղատնտեսական հումքը վերամշակող արդյունաբերության կազմակերպման հետ։

Ինչ վերաբերում է Դարալագյազին, ապա թեև նրա Կենտրոնական շրջանին հարելը կասկածից դուրս է, բայց նրա ձևավորումը, որպես տնտեսական ենթաշրջան, համեմատաբար թույլ է։ Ավելի շուտ նա աչքի է ընկնում որպես յուրահատուկ բնական-տնտեսական տերիտորիալ միավոր։ Հնարավոր է, որ նրա զարգացման հեռանկարները, բացի գյուղատնտեսությունից, թերևս ավելի մեծ չափով կապված լինեն լեռնահանքային արդյունաբերության զարգացման հետ։

Հարավային տնտեսական շրջանը՝ Զանգեզուրը, նույնպես արդեն լիովին ձևավորված տնտեսական շրջան է՝ միութենական նշանակություն ունեցող իր տնտեսության հետագա զարգացման պոտենցիալ մեծ հնարավորություններով։

Հյուսիս-արևմտյան շրջանը՝ Շիրակը, թեև ներկայումս առանձնացվում է որպես ռեսպուբլիկական նշանակություն ունեցող ինքնուրույն տնտեսական շրջան, սակայն բացառված չէ, որ նա հետագայում որպես ենթաշրջան մտցվի կենտրոնական շրջանի մեջ, քանի որ այդ շրջանի տնտեսության աճումը կենտրոնական շրջանի համեմատությամբ ավելի քիչ հեռանկարային է իր զարգացման առանձնահատկությունների տեսակետից։

Հյուսիսային տնտեսական շրջանը, բացառությամբ Ալավերդի-Կիրովական արդյունաբերական հանգույցի, ամենից քիչ է ձևավորված։ Սակայն նրա զարգացման հեռանկարներն այնպիսին են, որ երկու ենթաշրջաններն էլ հետագայում կարող են աճել և դառնալ ռեսպուբլիկական նշանակություն ունեցող ինքնուրույն տնտեսական շրջաններ։

Հայկական ՍՍՌ կազմում ներռեսպուբլիկական տնտեսական շրջանների առանձնացումը կօգնի ճիշտ լուծելու այն հարցերը, որոնք կապված են արտադրության տեղաբաշխման, նրա մասնագիտացման ու կոոպերացման և տերիտորիալ-արտադրական առանձին միավորների զարգացման հետ։

Ռեսպուբլիկայի տնտեսական շրջանների վիճակն ու հետագա զարգացման հեռանկարները վկայում են, որ Հայկական ՍՍՌ հանդիսանում է ՍՍՌՄ՝ միութենական մասշտաբով մասնագիտացված և իր սահմաններում հիմնական տնտեսական շրջան, որը աճման մեծ հեռանկարներ ունի։